ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 642

06 մայիս 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017 թվականի N 159-Ա - N 161-Ն որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒՋՅԱՆ

Կապ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 161-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի 2017 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   Սոցիալական պաշտպանություն բնագավառի հարազատին կորցրած անձի հուղարկավորության նպաստի երրորդ եռամսյակի ծախսերից 10.0 հազ. դրամը տեղափոխել երկրորդ եռամսյակ (բաժին 10, խումբ 3, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121164, հոդված 4726): Բյուջեի եկամտային մասում գույքահարկ փոխադրամիջոցների երրորդ եռամսյակի եկամուտներից 10.0 հազ. դրամը տեղափոխել երկրորդ եռամսյակ:

   Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման աշխատավարձի ծախսերից պակասեցնել 29.0 հազ. դրամ (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հոդված 4111) և այդ գումարն ավելացնել նույն բնագավառի ապահովագրական ծախսերին՝ հոդված 4215:

   Հիմք ընդունելով 2017թ. բյուջեում կատարվող փոփոխությունները, բյուջեի եկամուտների ու ծախսերի եռամսյակային բաշխման համամասնությունն ապահովելու նպատակով բյուջեի եռամսյակային բաշխման մեջ կատարել համապատասխան ճշտումներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ**

2017թ. մայիսի 05
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 160-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Մերուժան Մակինյանի դիմումը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Մերուժան Մակինյանին պատկանող, Թումանյան փողոցի շուկայամերձ տարածքում գտնվող, խանութ-սրահին տրամադրել Թումանյան փողոց, N 10/1 փոստային հասցե:
2. Թումանյան փողոց, N 10/1 փոստային հասցեում գտնվող խանութ-սրահի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՓԱՐԵՄՈՒՋՅԱՆ

2017թ. մայիսի 05

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 159-Ա

06-002-0192-0002 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱՄՈ ԵՆՈՔԻ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ 0.084 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.03 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Կամո Ենոքի Աղվանյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, 03.06.1989թ. տեխնիկական անձնագիրը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Կամո Ենոքի Աղվանյանին պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամաս, տուն N 61 ա հասցեում՝ 06-002-0192-0002 ծածկագրում գտնվող բնակելի տան և 0.084 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի N 61 ա հասցեում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել Սանահին կայարան թաղամաս, տուն N 61/1 փոստային հասցե:
3. Տնամերձ հողամասից ավել օգտագործվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, սահմանազատված 0.03 հա մակերեսով հողամասը ՀՀ կառավարության 50-Ն օրենքով համարել Կամո Աղվանյանի (ծնված՝ 15.08.1934թ.) սեփականությունը:

4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՓԱՐԵՄՈՒՉՅԱՆ**

2017թ. մայիսի 05

ք. Ալավերդի